կասում և լայնածաւալ Ռուսիայի որևէ հեռաւոր անկիւնում ոչ մի տեղ չի գտնուի այնպիսի դըժբախտ ու սոսկալի թշուառութեան մատնուած մի ժողովուրդ, ինչպէս որ Ուտիացոց երկրի բնակչութիւնն է։

Այս դժբախտ երկրի թանձր խաւարի մէջ խարխափող Հային իւր մահաբեր քնից զարթեցնող, նրա ազգաբնակութեան սիրտն ու հոգին կրթող և լուսաւորող թարմ երիտասարդ ոյժեր հարկաւոր են։ Այնպիսի թարմ ոյժեր, որոնք մի կողմից լուսաւորութիւն տարածէին այս դժբախտ երկրի ժողովուրդների մէջ, իսկ միւս կողմից հոգ տանէին նրանց տնտեսական և բարոյական վիճակի բարւոքման մասին։ Մի բարեխիղճ փաստաբան, մի մարդասէր բժիշկ և մի հմուտ մասնագէտ գիւղատնտես, անագին փոփոխութիւն կարող են մտցնել այս դժբախտ երկրի մէջ, ուր նրանց գործունէութեան համար լայն ասպարէզ և պարարտ հող կայ. ուր նրանք կարող են նիւթապէս և բարոյապէս շահուել առատօրէն, իսկ երկրի լուսաւորութեան և բարեկեցութեան մասին մի-մի լուսաւորիչ առաքեալ հանդիսանալ։ Յուսով եմ, որ իմ տկար ձայնս առանց հետևանքի չի մնայ. հաւատում եմ, որ մեր բանիմաց և կրթուած երիտասարդներից շատերը՝ իրենց քընութեան և ուսումնասիրութեան առարկայ կըդարձնեն Ուտիացոց աշխարհի դժբախտ ժողովուրդների ընտանեկան նիստն ու կացը, նրանց վարքն ու բարքերը և ազգային սովորութիւնները։ Յուսանք և սպասենք։